

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԿԱՐՆԵՑԻ

ԱՐԻԱԳԵԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

XVII—XIX դդ. եղել են մի շարք բանաստեղծներ, որոնց ստեղծագործությունը մի կողմից առնչվում է միջնադարի տաղերգությանը, մյուս կողմից՝ աշուղական արվեստին: Այդպիսին է նաև XVIII—XIX դդ. աշուղ-բանաստեղծ Ղունկիանոս Կարնեցու ստեղծագործությունը:

Ղունկիանոս երգչի հայերեն տաղերն առաջին անգամ տպագրվել են «Բազմավէպում»¹, Հրատարակող Աթանաս Տիրոյանը միաժամանակ բանասերների ուշադրությանը ներկայացրեց երգչին վերաբերող համառոտ կենսագրական տեղեկություններ²: Ա. Տիրոյանի ջանքերով 1886 թ. Ղունկիանոս Կարնեցու հայերեն տաղերը լույս տեսան առանձին գրքով: Այդ ժողովածուն վերահրատարակվեց 1894 թ., որի առաջաբանում Ա. Տիրոյանը գրում է. «Իր երգոց մեծ մասն հիմա կորուսյալ կը համարվի, և ձեռքերնիս հասածներն են գլխավորապես առ Սուրբ Կույան գրած գեղեցիկ նվագներն, որոնք երկու հատորիկ կը ձևացնեն, հայերեն և տաճկերեն լեզվով. ուներ նաև պատմական տեստաններ, որոց դարձյալ օրինակ չունիմք ձեռքներս»³:

Ա. Չոպանյանը, խոսելով աշուղական բանաստեղծության մասին, ի թիվըս այլոց, հիշում և բարձր է գնահատում Ղունկիանոս Կարնեցուն. «Ժողովրդական կամ աշուղական բանաստեղծության ամենն գեղեցիկ ու կատարյալ էջերը անոնք են, զոր արտադրած են ժողովրդական կեանքեն, լեզվեն ու շաշակեն ներշնչվող, բայց և նույն ատեն իրենց քերթողական բնագղին որոշ չափով գրական հմտություն ու ճաշակ միացնող աշուղներ. այդպես եղած են Սայաթ-Նովա, Նաղաշ Հովնաթան, Ղունկիանոս...»⁴: Այլ առիթով Ա. Չոպանյանը նկատում է. «Կարնեցի Ղունկիանոսը բանաստեղծության ու երաժշտության սիրահար թափառիկ վաճառական և կաթոլիկ հայ մըն էր, հեղինակ գրեթե միմիայն կրոնական ներշնչումով արտադրված բանաստեղծությանց, որոնց խորքին մեջ կգագայվի թե լարին միստիկական գրականության և թե հայ աշուղաձև կրոնական քնարերգության ազդեցությունը և ոճին ու տաղաչափությանը մեջ արաբ, պարսիկ ու թուրք բանաստեղծությանց և հայ ժողովրդական քերթության ազդեցությունը»⁵:

Մանոթանալով Ղունկիանոս Կարնեցու երգերին, Վալերի Բրյուսովը գրել է. «Աշուղների պոեզիայի հուժկու զարգացումը, իհարկե, կյանքի կոչեց բազմաթիվ հետևողներ ու նմանողներ: Արագ ստեղծվեց «Սայաթ-Նովայի դպրոցը» և, ըստ էության, մինչև մեր օրերն էլ բոլոր հայ աշուղները ենթարկված

1 «Բազմավէպ», 1884, էջ 50—57, 137—142, 212—216, 322—328, 1885, էջ 38—43, 123—131, 217—226:

2 «Բազմավէպ», 1883, էջ 97—110:

3 «Քերթածք Ղունկիանոս երգչի Կարնեցոյ», Վենետիկ, 1894, էջ Թ:

4 Ա. Չոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ ԺԷ:

5 Ա. Չոպանյան, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 33:

են նրա անհաղթահարելի ազդեցությանը, պտտվում են նրա գծած ծիրի շրջանակում... նշեմք միայն հետագա աշուղներից երկուսին, որոնց մոտ ավելի, քան ուրիշների, ուժեղ է հնչում մի ուրույն, նոր բան. դրանք Ղունկիանոսն ու Ջիվանին են: Ղունկիանոսի պոեզիան նշանակալի է միատիկ նրբերանգով, որ սակավազեպ է աշուղների երգերի մեջ...»⁶:

Վ. Բրյուսովը Ղունկիանոս Կարնեցու տաղերից երկուսը հատվածաբար թարգմանել է ռուսերեն. մեկը վերնագրել է «Мечта»⁷, մյուսը՝ «Видение»⁸. Ղունկիանոս Կարնեցուն անդրադարձել է նաև հայագետ Հ. Թորոսյանը, որի վկայությամբ՝ երգիչը եղել է «Լիբանանում՝ վանական, Եգիպտոսում՝ վաճառական, Ղրիմում՝ հաշվապահ, Շիրակում՝ ուսուցիչ: Այս գավառում է, որ գրում է իր բանաստեղծությունների մեծ մասը, որոնք շուտով դառնում են ժողովրդական ոչ միայն Շիրակում, այլև Կարինում, Կոստանդնուպոլսում...»⁹:

Պ. Խաչատրյանը, թվարկելով տաղանդավոր ստեղծագործողների մի մեծ խմբի (Դավիթ Սալաձորցի, Նաղաշ Հովնաթան, Պաղտասար Դպիր և ուրիշներ), հիշատակում է նաև աշուղ-բանաստեղծ Ղունկիանոս Կարնեցուն, համարելով նրան այդ շարքի վերջին ներկայացուցիչը, որի ստեղծագործությունը հարատեղ է մինչև XIX դարի առաջին կեսը¹⁰:

Ղունկիանոս Կարնեցին ծնվել է XVIII դ. վերջին քառորդում, Կարինում (էրզրում)¹¹: Նա եղել է Պարսկաստանում (Թավրիզ), Եգիպտոսում, կարճ ժամանակով՝ Հալեպում, Ղրիմում, Շիրակում: Մի քանի անգամ ճանապարհորդել է Կ. Պոլիս: Վերջին անգամ Կ. Պոլսից Ախալցխա վերադառնալով, երգիչը այնտեղ որոշ ժամանակ զբաղվում է երեսանների դաստիարակությամբ. հետո անցնում Զավախքի վարեման դուռը, ուր և վախճանվում է: Նա եղել է գրագետ ու զարգացած անձնավորություն (տիրապետել է արաբերենին, պարսկերենին, թուրքերենին և այլ լեզուների): Աթանաս Տիրոյանը Ղունկիանոս Կարնեցու կենսագրականում գրում է, որ նա «շատ ավելի աջողակ էր տաճկերեն գրելու՝ քան թե հայ լեզվով: Իր տաճկերեն երգերուն մի մասն նախ արաբիկ և պարսիկ լեզվի խառն և բարձր ոճով գրած էր, բայց հետո այլոց աղաչանք դարձուց զանոնք ի հասարակ լեզու տաճկաց, ամենուն դյուրահասկանալի լինելու համար...»¹²:

⁶ Վ. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 102—103:

⁷ В. Брюсов, Поэзия Арменни, Ереван, 1966, էջ 468.

⁸ Նույն տեղում, էջ 237:

⁹ H. Thoroossian, Histoire de la litterature Armenienne, Paris, 1951, էջ 225:

¹⁰ Պ. Մ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969, էջ 799—200:

¹¹ Աթանաս Տիրոյանը Ղունկիանոս Կարնեցու ծննդյան թվականի մասին գրում է. «Ղունկիանոսի ծննդյան որոշ թվականն չի գիտցվիր, բայց կերևի, որ բավական երկար ապրած պիտի լինի, որ երգերեն մեկուն մեջ յուր նեղությունները հիշելով՝ կգրե այսպես.

Կերպ կերպ խաչեր, վիշտ, նեղութիւնք,

Կարիք չի հասնիր կրօնելու.

Հէ՛մ ծերացայ, թափէ ընկայ.

Ի՛նչ յոյս մընաց ա՛լ ապրելու:

Ուստի մերձավոր հաշվով 55—60 տարվան հասակին մեջ վախճանած լինելով ի 1841 ամին, ծննդյան տարին կրթվի ընդ մեջ 1781—1786 ամաց: (Տե՛ս «Քերգուածք Ղունկիանոս երգչի Կարնեցու», էջ 5):

¹² Տե՛ս «Քերգուածք Ղունկիանոս երգչի Կարնեցու», էջ ԺԲ:

Հիմքեր կան ենթադրելու, թե Ղունկիանոս Կարնեցին 1840-ական թվականներին Ախալցխայում հանդես է եկել որպես գրիչ¹³, նկատի ունենք Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 9725, 2751 ձեռագրերը՝ գրված Ախալցխայում, 1839—1841 թթ.։ № 9725 ձեռագրի 4ա—205ա թերթերը ընդօրինակվել են 1839 թ. նոյեմբերին՝ Տեր-Ատեփանի որդի նազարեթ դպիրի ձեռքով, իսկ երկրորդ մասը արտագրել է Ղունկիանոս քահանան՝ 1841 թ. սեպտեմբերին, Ազգուրում (Ախալցխա)։ Գրչի հիշատակարանում ասված է. «Ահա ես Եզր Ղունկիանոս քահանայա գրեցի այս խորհրդատետրս 1841 ամի և սեպտեմբերի 5-ին ՂԱզդուր» (240ա)։

Նույն Ազդուրում 1840 թ. հոկտեմբերին նույն Ղունկիանոս գրիչը, Վրաստան գաղթած հայերի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի պատվերով, ընդօրինակել է Մատենադարանի № 2751 ձեռագիրը, որի հիշատակարանում դրված է. «օրինակեցի մատեանս գաղտական տէր Ղունկիանոս տէր Ատեփանեան»։

Ամի տեանն 1840 և հոկտեմբերի, 15: Ի յԱզդուր» (286բ)։

Չունենալով լրացուցիչ փաստեր այս ուշագրավ նորությունները ճշգրտելու և հիմնավորելու համար, առայժմ բավարարվենք այսքանով¹⁴։

Ղունկիանոս Կարնեցու երգերի մի ձեռագիրը գտնվում է Վիեննայի Մըխիթարյանների մատենադարանում (№ 517, ժամանակ՝ 1839 թ.)¹⁵, Այդ տաղարանը հեղինակի կողմից անվանված է «Ձիչեքլիկ» (այսինքն՝ ծաղկանոց, բուրաստան)։ Երգչի գրական ժառանգության ընդօրինակություններ կան նաև Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 9731, 9732, 10036, 7269 ձեռագրերում։ №№ 9731, 9732 ձեռագրերը հեղինակի երգարաններն են, ուր ամփոփված է նրա տաղերի մեծ մասը։

Երևանի Մատենադարանում պահվող № 10177 ձեռագիրը գրված է 1843 թ.։ Այն պարունակում է Ղունկիանոս Կարնեցու 3 հայերեն և 136 հայատառ յուրբերեն (անտիպ) երգեր¹⁶, Այս ժողովածուն կոչվում է «նաս-պահչա»։

Ղունկիանոս Կարնեցին գրել է հայերեն, հայատառ թուրքերեն, հայատառ քրդերեն (մեկ տաղ)։ Թուրքերեն տաղերի առատությունը վարելի է բացատրել նաև միջավայրի ազդեցությամբ։ Ինչպես հայտնի է, տակավին XVIII դ. Արևմտյան Հայաստանում սկսել էր զարգանալ հայատառ թուրքերեն գրչականությունը։ XIX—XX դդ. մայրենի լեզուն մոռացած թուրքախոս հայության համար հրատարակվում էին հայատառ թուրքերեն թերթեր, ամսագրեր ու զանազան բովանդակությամբ գրքեր։

Քաջածանոթ լինելով թուրքական և պարսկական ժողովրդական ստեղծագործությանը և առհասարակ մշակույթին, Կարնեցին հմտորեն օգտվել է դրանցից։

Ղունկիանոս Կարնեցու երգերի գիրքը սկսվում է «Գոռվասանք գրքոյս» կոչվող մի բանաստեղծությամբ։ Դա յուրահատուկ նախերգ է, որով տվյալ

13 «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Բ, Երևան, 1970, էջ 1352։

14 Ղունկիանոս Կարնեցու տաղերը պարունակող № 10177 ձեռագիրը իր գրչությամբ ամենևին նման չէ վերահիշյալ երկու գրչագրերին, հիշատակարաններից և ոչ մեկում մոտավոր ակնարկ չկա գրչի անձնավորության մասին։

15 Ը. Տ ա շ յ ա ն, Ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1894, էջ 990։

16 ՀՄՄՄ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), ձեռ. № 10177։

գրքի գովքն է արվում, որը մարդուն ուժ, բարություն տալով, փարատում է տրտմութիւնը, սիրով հրդեհում սիրտը.

Ասկէ գալած բարութիւնը՝ չի հասկընար ամէն մարդ.

Մէկ մօտեցիր, տես թե ի՞նչպէս կըլլաս ուրախ ու զըւարթ...¹⁷

Ղունկիանոս Կարնեցին իր շափածո խոսքով ձգտում է օգնել մարդկանց փայլելու հոգևոր առաքինութեամբ: Նա հիմնականում դիմում է Աստվածամորը, որը նրա ոգևորութեան աղբյուրն է, միակ սփոփիչը: Մարիամի կերպարում նա տեսնում է գեղեցկութեան, վեհութեան, ազնվութեան, բարութեան անսպառ աղբյուր, որին ուղղված տողերը մերթ կարոտի, մտատանջութեան, թախանձանքի և անձնվիրութեան մրմունջներ են, մերթ էլ՝ անդոհութեան բացականչութիւններ: Բանաստեղծի որակումներից շատերը («Նայուածքը, զըրույցքը խօշ», «Շէմքը փայլուն, ինքը ծաղիկ անթառամ», «Էլզուն խօսքերն անուշ», «ձէնը քաղցր, սիրուն մարգարտաշար մագերով» և այլն) իրականում կանացի գեղեցկութեան նկարագիր են¹⁸:

Իրավացի է Հ. Թորոսյանը, երբ գրում է. «Ղունկիանոս Կարնեցու թափառիկ, թշվառ կյանքը նրան ներշնչում է այնպիսի բանաստեղծութիւններ, որոնք միստիկ բնույթ ունեն: Հատկապես նկատելի է Աստվածամոր շափազանցված պաշտամունքը, որի փառաբանումը ակամայից մտածել է տալիս արդյոք՝ նրա պաշտամունքի առարկան Աստվածամայրն է, թե՛ իրական կինը»¹⁹:

Աշուղ-բանաստեղծը իր ոչ աշխարհիկ մտահղացումը մարմնավորում է բնութեան գեղեցիկ պատկերներով: Այսպես, օրինակ, հոգևոր թեմայով գըրված մի տաղում կարդում ենք.

Գիշերն այ լուսինը պայծառ փալիբրուն՝
Կը պըտըտի հետ գունըզգուն աստղերուն.
Երկնից երեսն է անպատում զարդարուն,
Մարդկանց ցընծում կը նըւիրէ անըստակ:
Աղբիւր շայեր՝ ընծայ նըւէր շատ ունին,
Սիրտ կը բանան ծառներ ծաղկունք նըռնենին,
Անձրեն որ կը ցօղայ ցոլմամբ գետինին՝
Հազար բարիքներ կը բերէ անըստակ²⁰:

Մարիամին նվիրված տաղում կարդում ենք.

Մէյր էրի զանազան պըտղալի ծառներ,
Թև թևի ճիւղերը՝ իրար են բըռներ.
Մէրկևիւններ, տանձեր, խաղողներ, նըռներ,
Պատուական խիստ համեղ միրգեր կան անուշ²¹:

17 «Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցոյ», էջ 1:

18 Նույն տեղում, էջ 31:

19 Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 225:

20 «Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցոյ», էջ 71:

21 Նույն տեղում, էջ 43:

Ղունկիանոս Կարնեցին ազնիւ, ասուրք» թեմաներով տաղերից բացի, ունի խոհա-խրատական, ինչպես նաև պանդխտութեան ու այլ թեմաներով գրված երգեր:

Աստանդական կյանքից հոգնաբեկ մարդու հառաչանքներ կան նրա շատ երգերում, ուր հեղինակը տենչում է շննալ անտեր ու անտուն, հայրենական հարկին կարոտ ու անտես:

Ղունկիանոսին հասցընէիր աւետեաց խապար մը նոր,
Ազատէիր պտրտուելէն դաշտ ու բըլուր սար ու ձոր...²²

Կամ՝

Ի՛նչպէս չըլամ, հայրենական երկըրէս եմ զըրկըւած,
Անտիրական ողորմելի քէօշէնեբը մընացած.
Ձեռքըս՝ ծոցըս, շըլիքըս ծուռ, խեղճ աղքատ մ'եմ մոլորած,
Տա՛ր զիս քո պայծառ քաղաքըդ, գեղի կարօտ մի՛ թողուր...²³

Բանաստեղծի այսօրինակ շատ երգերում, ինչպես և սպասելի էր, վըշտի, թախծի անձնական ապրումները պատկերում են հայի թափառական կյանքը դարասկզբին: Տաղերից մեկում Կարնեցին գրում է.

Կը պըտըտիմ քաղքէ քաղաք, գեղէ գեղ,
Չունիմ հանդարտութիւն՝ մէկ երկիր, մէկ տեղ...²⁴

Կամ՝

Թափառական շատ երկիրներ պըտըտեցի, չըխընտացի.
Չուր ջան ու անօգուտ վաստակ, միշտ ողբացի, չըխընտացի...²⁵

Մեկ այլ տեղ գրում է.

Կեանքըս անցաւ ցըրտով, ձըմուով, չըտեսայ գարօն, ամառ,
Տէրտըս շառաւիղներ յարուց, ցաւերս եղաւ խիտ անտառ.
Տուն մը չունիմ, ետրտ մը չունիմ, եղեր եմ թափառական,
Բընաւեր հաւքերու նըման՝ կը թըռտատեմ ծառէ ծառ...²⁶

Ղունկիանոս Կարնեցու գրական ժառանգութեան ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ նա աշխարհիկ տաղասաց է, ժողովրդի կյանքով ապրող, նրա խրատներով ու խոհերով մտածող ժողովրդական բանաստեղծ:

22 Նույն տեղում, էջ 81:

23 Նույն տեղում, էջ 42:

24 Նույն տեղում, էջ 181:

25 Նույն տեղում, էջ 51:

26 Նույն տեղում, էջ 8:

Տըգէտը գիտունին ծառայ է, ըսաց,
 Թէ և արքայ ըլլայ, աշխարհիս տիրէ:
 Անմիտ տըխմար մարդուն ի՞նչ ըսեմ հիմի,
 Կը փընտոէ, կը գըտնէ իրան պէս ումի...²⁷

Ղանկիհանոս Կարնեցին հաճախ է արձագանքել առօրյա կյանքում տեղի
 յունեցած դեպքերին՝ գրելով. «Խեղճին ու բախտին դաստենը» (խելքի ու բախ-
 տի զրուցատուությունը), «Զեռասուն աշակերտիս հիւանդութիւնը», «Կէօզլի-
 կիս կորուստը», «Ծղբօրս հիւանդութեան վրայ», «Մխիթարութիւն վասն մա-
 հուան քրոջ», «Հրաժեշտ ի սիրելեաց», «Դարձեալ հրաժեշտ ի սիրելեաց» և
 այլ նման երգեր:

Նման երգերում ավելի լայնորեն է բացվում բանաստեղծի ներաշխարհը,
 մարդասիրտությունը.

Ես չըմեռած՝ մարդ չըմեռնի, չըտեսնամ կըսկիծները.
 Սէրըս եռաց, արտասուեից, մեր եղբայրը հիսանդ է...²⁸

Միջավայրը սակայն այդպիսին չէ. ուստի բանաստեղծը տրտնջալով
 հարցնում է.

Ազնիւ սիրելիք, իմ գանգատս է ձեզտէն.
 Ինչ պատճառի խեղճիս աչքէ ձըգեցիք...²⁹:

Երգիչն իր ժամանակը բնութագրում է որպէս «գէշ դար», «դառն աշ-
 խարհ», «վըտանգներով լեցուն», ուր սուգն ու տրտմությունը փարատող չկա,
 ուր անողոք բարքերից քարացել են մարդկանց սրտերը: Նա նզովում է ա-
 նարդարն ու շարը՝ անմարդկայինն ու անբնականը.

Անհասատարիմ են մարդիկ, անհաստատ,
 Կը մօտենան՝ երբ գործս յաջող, փողս առատ.
 Յանկա՛րծ տեսնան նեղութեան մէջ, օրըս վատ,
 Երես կը դարձընեն, հեռու կը փախչին...³⁰

Բանաստեղծությունների «Յորդորականք» շարքը մարդկանց խրատում է
 խուսափել ազահուլթյան ախտից, շարն ու բարին գատել իրարից, վաստակը
 շոայլությամբ շվատնել և ոչ էլ ժլատությամբ անձը գրկել, շճգտել բարձր աս-
 տիճանի, նեղության մեջ լայնասիրտ լինել:

«Աշխատութեան վերայ» բանաստեղծությամբ երգիչն աշխատանքի գովքն
 է անում, շեշտելով աշխատանքի սրբագործող և բարձրացնող դերը.

Ո՛վ ոք աշխատութեան սըրտով կը ջանայ,
 Հէջ մէ բանի մ՛կարօտ էհտաճ շի մընայ.
 Մալ ու տէօվլէթ գանձ ու պատիւ կը ստանայ,
 Հէմ տէր կ'անէ բարի անուն դատիլը...

27 Նույն տեղում, էջ 72:

28 Նույն տեղում, էջ 88:

29 Նույն տեղում, էջ 89:

30 Նույն տեղում, էջ 87:

Արդարութիւնն ալ մի մոռնար միանգամ,
Ազահութեան ախտից փախիր յարածամ,
Հալալ արդիւնքիդ մէջ շրխառնես հարամ,
Որ կը լինի փուճ անպիտան՝ դատիլը...³¹

Աշուղ-բանաստեղծի ստեղծագործութեան մեջ միաժամանակ ակնառու են միջնադարյան տաղերգութեան և աշուղական երգերի մոտիվները, տաղերգութեան և աշուղական բանարվեստի շատ գծերի միահյուսումն ու միասնութիւնը: Դրա լավագույն օրինակներն են նրա հարց ու պատասխանի ձևով գրված տաղերը.

Արդեօք քեզ ի՞նչ հանդիպեցաւ.
Ինչո՞ւ վըրդովեցար, սըրտիկ.
Կարծես թե Յովսեփի նըման
ՅՅգիպտո՞ւ ծախուեցար, սըրտիկ:
Ա՛խ, աւա՛ղ, ցաւազար սըրտիկ,
Մի՛ լար անմըխիթար սըրտիկ,
Ահրով համբերէ տա՛ր, սըրտիկ...³²

Ղունկիանոս Կարնեցու հայերենը ժամանակաշրջանի աշխարհաբարն է՝ Կարինի և Շիրակի քարբառային արտահայտութիւններով, դարձվածքներով, հայոց միջավայրում օգտագործվող թուրքերեն և պարսկերեն բառերով:

Նյութի ինքնատիպ ընկալումը, ժողովրդական մտածողութեան տարրերի պատշաճ օգտագործումը հեղինակի ոճին տալիս են բանաստեղծական հնչեղութիւն:

Ղունկիանոս Կարնեցու տաղերում կան ո՛ճ, ո՛վ, ե՛րբ, ի՞նչ, ա՛յլ սկզբվածքներով կրկնականեր, որոնք խոսքին ուրիշ և երաժշտականութիւն են հաղորդում: Քիչ չեն նաև գեղեցիկ համեմատութիւններն ու պատկերավոր արտահայտութիւնները:

Նրա երգերի տողերը քառանդամ վամ եռանդամ են՝ 4—4—4—3, 4—4—3 սխեմայով: 15 վանկանի տողը բաժանվում է երկու մասի. առաջին մասն ոսնի 8 վանկ, իսկ երկրորդը՝ 7:

Աշուղ-բանաստեղծը, իր նախորդների նման, մեծ ուշադրութիւն է դարձնում բանաստեղծական տան տողաքանակի փոփոխութեան վրա՝ կապված երգի եղանակի, կրկնակաների ու հանգավորման հետ: Նա ունի 4—8 տողանոց տներով տաղեր: Երևում է, որ ծանոթ է եղել բանաստեղծական տների կառուցման գաղտնիքներին:

Ղունկիանոս Կարնեցու համեստ գրական ժառանգութիւնը իր տեղն ունի հայ աշուղական պոեզիայի զարգացման ընդհանուր շղթայում:

31 Նույն տեղում, էջ 76—77:

32 Նույն տեղում, էջ 77:

ԼՄՆԿԻԱՆՈՏ ԿԱՐՆԵՑԻ

ԱՐՈՒԱԴՆԱ ԱՐՄՅՈՒՅՆՅԱՆ

ՐԵԶՅՈՒՄԵ

Պոետ-աշուգ Լունկիանոս Կարնեցի (XVIII—XIX вв.)—скромный труженник на литературном поприще переходного периода. Пользовавшийся в свое время широкой популярностью, Лункианос Карнеци, сохранил и продолжил традиции армянской средневековой лирики, а также поэтическое искусство армянских ашугов. Об этом свидетельствуют хранящиеся в Матенадаране рукописи (№№ 9731, 9732, 10177, 10036 и 7269).